

ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԲԱԺԱՆՄՈՒՆԵ

1215 O Street, MS 7-40
Sacramento, CA 95814
TTY: 711
(833) 421-0061



19 Ապրիլ 2023

ՈՒՂՂՈՒԲԱԾ՝ ՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆՆԵՐՈՒՄ

ՆԻԻԹ՝ ԸՆՏԱՆԻԹԻ ՉԱՄԱԿԱՐԳՈՒԲԱԾ ԱԶԱԿՑՈՒԹԵԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՓՈՐՁ ԾՐԱԳԻՐ՝ ՉԱՓԱՅԱՍ ՍՊԱՌՈՂՆԵՐՈՒՄ ՉԱՄԱՐ, ՈՐՈՆԵ ԻՐԵՆՑ ԸՆՏԱՆԻԹԻՆ ՅԵՏ ԿԸ ԲՆԱԿԻՆ. ՅԱԲԵԼԵԱԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Սոյն նամակագրությունը Չարգացման ծառայություններու բաժանմունքի (Բաժանմունք) [27 Յունուարի 2023-ի ուղեցոյցին](#) շարունակությունն է եւ կը ներառէ թարմացումներ, պարզաբանումներ եւ յաւելեալ տեղեկություններ՝ կապուած ընտանիքի համակարգուած աջակցութեան (CFS) ծառայություններու փորձ ծրագիրին հետ: Բաժանմունքի 27 Յունուար 2023-ի ուղեցոյցին A, C եւ D յաւելուածները թարմացուած եւ կցուած են, եւ պետք է փոխարինեն նախորդ տարբերակները:

CFS ծառայութեան ծածկագիր եւ ենթածածկագիր

Այն պարագային, երբ ուղղակի ծառայություն մատուցող մը չէ գտնուած, CFS-ի մատակարարները կրնան անմիջական աջակցություն տրամադրել մինչեւ 90 օր, մինչեւ որ մշտական անմիջական խնամքի ծառայություն յայտնաբերուի եւ գործի դրուի:

Ընդունուած CFS մատուցողները պետք է շրջանային կեդրոններուն հաշուեցոյց դրկեն՝ գործածելով 076 ծառայութեան քտոր: «DIR» ենթածածկագիրը պետք է աւելցուի ծառայութեան ծածկագիրին՝ նշելու ծառայութեան ժամերը, որոնք կը տրամադրուին որպէս անմիջական խնամք: Այս ենթածածկագիրը այժմ հասանելի է գործածութեան համար: Յառաջիկայ երկու շաբաթներուն ընթացքին, Բաժանմունքը տեղեկություն պիտի տրամադրէ ուղղակի ծառայութեան սակագիներուն մասին:

CFS-ի գնահատումներ

Շրջանային կեդրոնները պետք է թոյլատրեն մինչեւ 12 ժամ տեւողութեամբ CFS գնահատումները: Ասիկա կը փոխարինէ Բաժանմունքին 27 Յունուար 2023-ի ուղեցոյցին մէջ եղող պահանջը, որուն մէջ կը նշուէր, որ CFS-ի գնահատումները պետք է թոյլատրուին առնուազն վեց ժամ եւ առաւելագոյնը 12 ժամ տեւողութեամբ:

Ինքնորոշման ծրագիր (SDP)

Այս պահուն CFS-ի ծառայություններու փորձ ծրագիրը անհասանելի է SDP-ի մասնակիցներուն համար: Բաժանմունքը կը սերտէ, թէ ինչպէ՞ս կրնան CFS-ի ծառայությունները հասանելի ըլլալ SDP-ի մասնակիցներուն: Յստականապէս պարագային, յաւելեալ պարզաբանումներ կը տրուին:

«Ստեղծել համագործակցություններ, աջակցիլ ընտրանքներու»

Շրջանային կեդրոնի գործադիր
տնօրեններ 19 Ապրիլ 2023
Բ. Էջ

Եթե դուք սպառող կամ ընտանիքի անդամ մըն էք եւ հարցումներ ունիք այս նամակագրության վերաբերեալ, հաճեցէ՛ք կապուիլ ձեր շրջանային կեդրոնի ծառայութիւններու համակարգողին հետ: Շրջանային կեդրոնները, որոնք հարցումներ ունին, պէտք է դիմեն հետեւեալ Ե-նամակի հասցեին՝ CFS@dds.ca.gov

Յարգանք,

Բնագիրի ստորագրող՝

ԴՈԿՏ. ՎԻԷԻ Լ. ՍՄԻԹ
Փոխտնօրէն
Զաղաքականութեան եւ ծրագիրներու մշակումի

բաժնի յաւելումներ

cc: Շրջանային կեդրոնի վարիչներ
Սպառողական ծառայութիւններու շրջանային կեդրոնի տնօրէններ
Շրջանային կեդրոնի համայնքային ծառայութիւններու տնօրէններ
Շրջանային կեդրոնի գործակալութիւններու ընկերակցութիւն
Նենսի Պարկմըն, Չարգացման ծառայութիւններու բաժանմունք
Պրայըն Ուինֆիլտ, Չարգացման ծառայութիւններու բաժանմունք
Գարլա Բասթանիետա, Չարգացման ծառայութիւններու բաժանմունք
Էռնի Զրուզ, Չարգացման ծառայութիւններու բաժանմունք
Ճենիֆըր Փարսընս, Չարգացման ծառայութիւններու բաժանմունք

«Ստեղծել համագործակցութիւններ, աջակցիլ ընտրանքներու»